



ՀԱՃԱԽՈՐՀՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԿՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընկերությունը իր հաճախորդների վերաբերյալ կարող է պահանջել, հավաքագրել և պահպանել նրանց հետ գործարքներ կնքելու կամ չկնքելու վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:
2. Հաճախորդի անձնական տվյալների պահպանումն ու դրանց մշակումն ու օգտագործումն իրականացվում է «Անձնական Տվյալների Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, ըստ որի, տվյալների մշակման իրավունքն առաջանում է պայմանագրային պարտավորություններից կամ Հաճախորդի հետ կնքվելիք վարկային պայմանագրից: Տվյալների մշակումը կատարվում է Ընկերության օրինական շահերին ծառայելու համար՝ միաժամանակ հարգելով Հաճախորդի հիմնարար իրավունքներն ու ազատությունները:
3. Ընկերությունը երաշխավորում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
4. Ընկերությունը կարող է դատարանում հրապարակել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հաճախորդի վերաբերյալ՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում և սահմաններում, եթե վեճը ծագել է Ընկերության և տվյալ հաճախորդի միջև:
5. Ընկերության աշխատակիցները պետք է ապահովեն իրենց հայտնի դարձած գաղտնի տեղեկատվության արտահոսքի բացառումը:
6. Ընկերության աշխատակիցներն աշխատանքային գործունեության ընթացքում, ինչպես նաև աշխատանքից ազատվելու կամ նույնիսկ հեռացվելու դեպքում իրավունք չունեն աշխատանքային գործունեության ընթացքում իրենց հայտնի դարձած բանկային, առևտրային և անձնական գաղտնիք կազմող տեղեկատվությունը գրավոր կամ բանավոր կերպով հրապարակել կամ տրամադրել երրորդ անձի: